www.yerkir.am
«Երկիր խմբագրություն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Հանրապետության փ. 30, հեռախոս +374 10 521501
e-mail: yerkir.am@gmail.com

N - 040
10.02.2020 թ.

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Yerkir.am ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻ
ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՑ

Հարգելի պարոն Գրիգորյան,

2020 թ. հունվարի 29-ի N - 017 նամակով դիմել էինք ձեզ՝ խնդրելով սահմանված կարգի համաձայն տրամադրել սպառիչ տեղեկատվություն՝ հետևյալ հարցի վերաբերյալ. որքա՞ն է կազմել Ձեր ղեկավարած մարզպետարանի աշխատակիցներին վճարված պարգևավճարների չափը՝ 09.05.2018 թվականից մինչև 31.12.2019 թվականը:

2020 թ. փետրվարի երեքի N 01/13.1/0612.2020 պատասխան նամակում նշված էր այն մասին, որ վճարված պարգևավճարների մասին տեղեկատվություն չեք կարող տրամադրել, քանի որ առկա չէ աշխատակիցների համաձայնությունը:

Սույնով հարկ համարեցինք լրացուցիչ պարզաբանել՝ մենք չենք ցանկացել ստանալ աշխատակիցների պարգևավճարի չափը՝ անուն առ անուն կամ առանձնաբար:

Ըստ այդմ՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին կետի, 53-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք սահմանված կարգի համաձայն տրամադրել սպառիչ տեղեկատվություն՝ հետևյալ հարցի վերաբերյալ.

Որքա՞ն է կազմել Ձեր ղեկավարած մարզպետարանի աշխատակիցներին վճարված պարգևավճարների <u>ընդհանուր</u> չափը՝ 09.05.2018 թվականից մինչև 31.12.2019 թվականը (մեզ հարկավոր է ընդամենը մեկ թիվ):

Կանխավ շնորհակալ եմ՝

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 1039
12. 02 2020 թ.

Հարգանքով՝
գլխավոր խմբագիր՝ Վ. Սարգսյան